

(Յուլի. 2. 35)

Հասկերն ատոր կարմիր են,
Ֆորենի դաշտն է ծրփուն.
Հովեր կ'անցնին ու կ'երգեն
Ալէլուիա, օրհնութիւն:

Ու կը կըրկեն մեղմաձայն
Հասկերն այդ երգն անքնին.
«Ես եմ երկնից մանանան
Ամենասուրբ Աղանին»:

Այսպէս անոյշ երազով
Նըշխար ըլլալ կը ցանկան,
Ու կը սպասեն ապահով
Արեւապաշտ ամառուան:

Գալով երբեմն իրարու
Խաչ կը զըծեն լայնանիստ,
Թաքուն խօսքի մը հըլու
Կ'իջնէ Յիսուս քիստ առ քիստ:

«Ես եմ մարմին, ես եմ հաց,
Ո՛վ դուք նըքթեալ հէք մարգեր»,
Եւ անոր հետ աչքեր թաց
Կը հետեւին աղօթկեր:

Այլեւս նա ոգի չէ
Թէպէտ ճերմակ քղամիզով,
Հազար դարեր միշտ նոյնն է,
Նոյնը խորունկ վէրքերով:

Ու դարերով նոյն ցորենն
Կ'ելլէ ծովի պէս ծրփուն,
Հովեր կ'անցնին ու կ'երգեն
Ալէլուիա, օրհնութիւն:

Կ'անցնի ինչպէս երբեմնի
Հասունացած արտերէն,
Իր քղանցքին կը հըպի
Թըշուառութիւնն համօրէն:

«Ես եմ մարմին, հաց կենաց,
Շօշափեցէք և տեսէք.
Ձեր մատներով թանձրամած
Ձիւս ամէն օր պիտ' ուտէք»:

Աշխարհն «Ամէն» կը կըրկնէ
Պատարագի երգերով.
Երկինք երկիր խորան է,
Սըրտերն անոյշ խունկի ծով:

«Առէք կերայք, այս է հաց
Ձոր երկընքէն ձեզ բերի».
Եւ ինքն Յիսուս խաչաբարձ
Շըրթներու մէջ կը հալի:

Ձանգերն հեռուն՝ կը հընչեն
Սըրտերուն հետ միաձայն.
Դաշտերու մէջ հոգեղէն
Լոյս կը սփռի անսահման:

Դարձեալ Յիսուս հեզագնաց
Աներեւոյթ կը շըրջի.
«Ես եմ մարմին, ես եմ հաց
Նորոգ կենաց աշխարհի»:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

20 Հոկտեմբեր 1933
Փարիզ

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԲԻՑ ՄԻՆԶԵԻ 70-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ 1934, էջ 81)

40-ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆ

“ԽԵԼՔԻՑ ՊԱՏՈՒՀԱՍ”

Հեղ. ԳՐԻԳՈՆԻՈՎԻ

Ռուսական քաղաքների ծագումը: 19-րդ դարի քաղաքականության թափանցիկ Ռուսաստանյ թատրոնի պատմության հիմնական մոմենտներն արձանագրող պատմաբանը, անկասկած պիտի կանգ առնի նաեւ ռուսական թատրոնի սկզբնական շրջանի պատմության վրայ, որի հետ սերտ կերպով կապւած են թիֆլիսի հայ թատրոնի առաջին շրջանի պատմության մի քանի բնորոշ էջերը:

Ռուսաստանյ թատրոնի պատմության մէջ ուշագրաւ է հէնց այն հանգամանքը, որ 30-ական թափանցների վերջերին և 40-ական թափանցների սկզբին թիֆլիսում հրապարակ է գալիս ռուս թատերասէրների մի խումբ և իր ներկայացումներից մէկը կազմակերպում Ներսիսեան դպրոցի դահլիճում: Նշանաւոր մի երեկոյ է դա: Ռուս թատերասէրներն այդ երեկոյ թիֆլիսում առաջին անգամ բեմադրում են Գրիբօեդովի «Խելքից պատուհաս» անմահ կոմէդիայի առաջին երկու գործողութիւնը, որ հեղինակը գրել էր թիֆլիսում: Այս հանգամանքը հաստատում է նաեւ իւրի վսեմելովսկին: Իր «Հայ բեմի պատմութիւնը» խորագրով յօդաւորում նա գրում է:

— «Խելքից պատուհաս» կատակերգութեան պատմութեանը ծանօթ մարդկանց յայտնի է, որ, այն ժամանակները, երբ Կովկասում փոխարքայութիւն էին անում Ռոգէնը, Գալովինը ու Նէյդհարդը, Գրիբօեդովի կոմէդիան խաղում էին սիրողները, բարեգործական նպատակով, նոյնիսկ հեղինակի ներկայութեամբ: Բայց ոչ ամէնքը կարող են յիշել, որ այդ ներկայացումներից մէկը կայացաւ Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի դահլիճում»:

«Խելքից պատուհաս»-ի գաղափարը Գրիբօեդովը յղանում է Թաւրիզում 1821 թւին և վերջացնում 1824 թւին Տուլայի նահանգում: Ձեռագիրն առաջին անգամ բեմադրւում է 1827 թւի Յունաւրին Երեւանում, Հրազդանի ափին բարձրացող սարգարի պալատի դահլիճում՝ զօրապետ Կրասովսկու նախաձեռնութեամբ և ռուս սպաների ղերակատարութեամբ:

Սակայն շուտով խափանւում են ներկայացումները և Գրիբօեդովն այնպէս էլ մեռնում է անմիջեմբար, չկարողանալով ոչ ներկայացնել իր պիէսը և ոչ էլ տպել տալ: Միայն 1843 թ. առաջին անգամ լոյս է տեսնում ձեռագիրը, սակայն զբաղւած Յվէտանի խիստ զբաղւածութեամբ փոփոխւած ու աղաւաղւած:

Նոր շրջան: 1845 թւին ռուսական թատրոնի համար բացւում է մի նոր շրջան, երբ Կովկասի փոխարքայ է նշանակւում Միխայիլ Սեմեօնովիչ Վորոնցովը: Ռուս